ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 թ.

2011 թ. Փամբակ համայնքի բյուջեն զուտ եկամուտների մասով կատարվել է 73.9 տոկոսով: Գույքահարկի մասով կատարվել է 68 տոկոսով, հողի հարկի մասով 48.12 տոկոսով, վարձավճարների մասով՝ 123,6 տոկոսով: Մարվել է նախորդ տարիներից կուտակած 1700 հազար դրամ աշխատավարձերի պարտք, պարտադիր սոցվճարների և եկամտահարկի մասով պարտքեր չկան:

Կայացվել է համայնքի ղեկավարի 12 որոշում և 7 կարգադրություն,հրավիրվել և անցկացվել է ավագանու 6 նիստ:

2011 թվականի ընթացքում համայնքային կենտրոնի շենքում ստեղծվել է երիտասարդական կենտրոն,YMCA կազմակերպությունը կենտրոնին տրամադրել է գույք ակտիվ հանգստի կազմակերպման համար:

«ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության օգնությամբ կառուցվել է համայնքի մանկապարտեզի խաղահրապարակը, բարկարգվել է դպրոցի մարզահրապարակը և շրջակայքը: Ընթացքի մեջ են համայնքի հրապարակի և համայնքային կենտրոնի տարածքի բարեկարգման և ձևավորման աշխատանքները:

ՄԱԿ-ի ՀՊԾ-ի օժանդակությամբ բարեկարգվել է գյուղ մտնող 1 կմ երկարությամբ ճանապարհը:

ՄԱԿ-ի UNIDO –ի ֆինանսավորմամբ կատարվել են նախահաշվային և նախագծային աշխատանքներ համայնքային գյուղտեխնիկայի կայանատեղի կառուցման նպատակով, և հայտարարվել է մրցույթ շինարարական աշխատանքները սկսելու համար:

Նույն կազմակերպությունը համայնքում փոքր ու միջին բիզնեսի զարգացման համար տրամադրել է վարկային միջոցներ արտոնյալ պայմաններով,և այդ ծրագիրը շարունակական է:

2011 թ. համայնքը օգտվել է ՀՀ կառավարության կողմից տրամադրված գարու սերմացուից, ստացվել է 17 տ. սերմացու, կատարվել է 56 հա գարնանացան,որի միջին բերքատվությունը կազմել է 15 գ.: 2011 թ. կատարվել է 51 հա ցորենի աշնանացան:

Փամբակ համայնքի ղեկավար՝ Հ.Ազարյան